Սկզբունքներ և կանոններ, որոնցով պետք է առաջնորդվի ՏԸՀ անդամը

✔ Հարգել օրենքը, հետևել նրա տառին

✔ Լինել անաչառ, չեզոք, անկողմնակալ, անկախ, զուսպ, քաղաքավարի

✔ Հատուկ հարգալից վերաբերմունք ունենալ ԱՀ պետական խորհրդանիշների, ընտրողների, ընտրության բոլոր մասնակիցների (դիտորդներ, ՁԼՄ ներկայացուցիչներ, վստահված անձինք և այլոք) նկատմամբ

✔ Ուշադրություն դարձնել սեփական արտաքին տեսքին ու վարվելակերպին, վերնազգեստի վրա կրել համապատասխան վկայական

1 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

➡ Քվեարկության նախորդ օրը ՏԸՀ նախագահը ՏարԸՀ-ից ստանում է ՏԸՀ կնիքը, քվեաթերթիկները, քվեատուփեր, քվեախցիկ (ներ) և քվեարկությունն անցկացնելու համար այլ պարագաներ:

➡ ՏարԸՀ-ից քվեաթերթիկները տեղամասային կենտրոն բերելուց հետո հանձնաժողովի նիստում վիճակահանությամբ որոշվում են քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի 3-ական անդամները, ովքեր պարտավոր են այդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն, ստորագրել բոլոր քվեաթերթիկների հակառակ կողմում: Վիճակահանությանը մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները:

➡ Հաշվարկված և ստորագրված քվեաթերթիկների 100-ական կապերը, ընտրողների ցուցակները և կնիքը տեղադրվում են չհրկիզվող պահարանում:

➡ Պահարանը փակվում է, թղթով սոսնձվում, ստորագրվում (ՏԸՀ նախագահ, տեղակալ, քարտուղար, ցանկության դեպքում՝ ՏԸՀ անդամներ):

➡ Չհրկիզվող պահարանը հանձնվում է ոստիկանության աշխատակցին, գրանցամատյանում լրացվում է հանձնման-ընդունման մասին արձանագրություն:

Ուշադրություն

✔ ՏԸՀ նիստերին, քվեարկության արդյունքներն ամփոփելու ընթացքում տեղամասային կենտրոնում կարող են գտնվել վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները, վստահված անձինք (յուրաքանչյուր թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) 1 վստահված անձ), տեղական դիտորդները (յուրաքանչյուր կազմակերպությունից 1 դիտորդ), միջազգային դիտորդները (մինչև 2 դիտորդ և 1 թարգմանիչ), ՁԼՄ-ների ներկայացուցիչները: Հանրապետության նախագահի թեկնածուն, ԱԺ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված 1 թեկնածու կարող է ներկա գտնվել միայն քվեարկության արդյունքներն ամփոփելու նիստին:

✔ Վստահված անձինք, դիտորդները և լրագրողները պետք է կրեն ԿԸՀ սահմանած նմուշի համապատասխան վկայականներ:

2 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

1. ՄԻՆՉԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ (ժամը 7.00-8.00)

➡ Ստուգվում է պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը և ոստիկանության ծառայողից ընդունվում չհրկիզվող պահարանը:

➡ Գրանցամատյանում լրացվում է պահարանն ընդունելու մասին արձանագրությունը:

➡ ՏԸՀ-ն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը.

1) ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամներին՝ մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն 1 անդամ.

2) քվեաթերթիկներ հատկացնող հանձնաժողովի անդամներին՝ մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն 1 անդամ.

3) քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու առնվազն 1 անդամ.

4) քվեատուփի համար պատասխանատու առնվազն 1 անդամի.

5) շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող առնվազն 1 անդամ (անհրաժեշտության դեպքում):

Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում:

Վիճակահանության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում:

➡ Բացվում է չհրկիզվող պահարանը:

➡ Հանվում են քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները, կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարվում է կնիքի համարը:

➡ Ստուգվում է քվեատուփերի (առկայության դեպքում՝ նաև շրջիկ արկղի) դատարկ լինելը (բարձրաձայն հայտարարվում այդ մասին) և մինչև փակելը դրանք ցուցադրվում են նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց, ապա հատուկ կապիչներով փակվում և կնքվում:

➡ Ընտրողների ցուցակները հանձնվում են ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամ(ներ)ին:

➡ Քվեաթերթիկները 100-ական փաթեթով հատկացվում են քվեաթերթիկներ հատկացնող անդամ(ներ)ին:

➡ Հանձնաժողովի կնիքը և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները հանձնվում են քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու անդամին: Նրան է փոխանցվում նաև թանաքոտված բարձիկ:

Ուշադրություն

✔ Նշված բոլոր գործողությունները կատարվում են այն հաշվով, որպեսզի ժամը 8.00-ի դրությամբ ավարտված լինեն:

✔ Հանձնաժողովի նախագահը ժամը 8.00-ին բարձրաձայն հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

✔ Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո հանձնաժողովի նախագահն անմիջապես տեղեկացնում է ՏարԸՀ նախագահին տեղամասը բացված լինելու մասին:

2. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

➡ Մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը ՏարԸՀ է հաղորդվում համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը և հաղորդված թվերը գրառվում են նաև ՏԸՀ գրանցամատյանում:

3. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄ

➡ Ժամը 20:00 հայտարարվում է քվեարկության ավարտի մասին:

➡ Արգելվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

➡ Քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին տրվում է քվեարկելու հնարավորություն:

➡ Փակվում է քվեատուփի ճեղքը:

➡ Փակվում է տեղամասային կենտրոնը:

➡ Մինչև ժամը 20.30 ՏարԸՀ է հաղորդվում

տեղամասում քվեարկության մասնակիցների թիվը:

4. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՓԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ

1) Քվեարկության արդյունքների ամփոփում

➡ Հաշվարկվում է չօգտագործված քվեաթերթիկների թիվը:

➡ Այդ թվին ավելացվում է նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների թիվը:

➡ Ստացված թիվը, որպես մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվ, բարձրաձայն հրապարակվում է և լրացվում գրանցամատյանում:

➡ Մարված քվեաթերթիկները փաթեթավորվում են, և փաթեթը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթում (մեկանգամյա օգտագործման պարկում):

➡ Առանձին-առանձին հաշվարկվում են ընտրողների հիմնական և լրացուցիչ ցուցակներում ընդգրկված ընտրողների թվերը:

➡ Ընտրական ցուցակների ընտրողների թվերն առանձին հաշվարկելուց հետո, յուրաքանչյուր ցուցակի դեպքում բարձրաձայն հրապարակվում է և լրացվում գրանցամատյանում:

➡ Բոլոր ցուցակների ընտրողների թվերը գումարվում են, գումարը բարձրաձայն հրապարակվում որպես ընտրողների ընդհանուր թիվ և լրացվում գրանցամատյանում:

➡ Առանձին-առանձին հաշվարկվում են ընտրողների հիմնական և լրացուցիչ ցուցակներում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվերը (ստորագրությունների հիման վրա):

➡ Բոլոր ցուցակների մասնակիցների թվերը գումարվում են, բարձրաձայն հայտարարվում է թիվը և որպես մասնակիցների ընդհանուր թիվ լրացվում գրանցամատյանում:

2) Քվեաթերթիկների տեսակավորում

Ուշադրություն

✔ Սկզբում բացվում է Հանրապետության նախագահի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփը, այնուհետև՝ Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփը:

✔ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ բացվում է (ոչ ուշ, քան մինչև ժամը 20.00-ն) շրջիկ արկղը և նրանում գտնվող բոլոր քվեաթերթիկները ծալված վիճակում մեկ-մեկ գցվում են համապատասխան քվեատուփերի մեջ:

➡ Բացվում է քվեատուփը:

➡ Քվեատուփից հանվում է մեկ քվեաթերթիկ:

➡ Բարձրաձայն հայտարարվում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի, վավեր կամ անվավեր լինելու մասին, նաև՝ թե ինչպես է քվեարկված:

➡ Քվեաթերթիկը ցուցադրվում է այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար:

Ուշադրություն

✔ Զորամասում, ազգային անվտանգության ծառայությունում, ոստիկանության զորքերում, քրեակատարողական հիմնարկում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակները փաթեթավորվում են առանձին, փաթեթը կնքվում և տեղադրվում Ազգային ժողովի ընտրությունների համար նախատեսված ընդհանուր փաթեթում (մեկանգամյա օգտագործման պարկում):

➡ Ընտրողների ցուցակները փաթեթավորվում են և փաթեթը տեղադրվում է առանձին փոքր պարկում:

3)Արձանագրության կազմում

➡ Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները, ՏԸՀ-ը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն՝ յուրաքանչյուր ընտրության համար առանձին: Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից:

➡ Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

➡ Արձանագրության 4 օրինակից 1 օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին, 1 օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթում: ՏԸՀ նախագահը և քարտուղարն ընդհանուր փաթեթները (մեկանգամյա օգտագործման պարկերը), ընտրողների ցուցակները պարունակող փոքր պարկը, յուրաքանչյուր ընտրության քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ներկայացնում են ՏարԸՀ:

➡ ՏԸՀ-ում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրամադրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020

ՄԱՐՏԻ 31

ՀՈՒՆԱԹԵՐԹ

տեղամասային ընտրական հանձնաժողովի (ՏԸՀ) գործողություններ

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
ք. Ստեփանակերտ, Կնունյանցների 2
Հեռ. +374 47 94 43 09
www.cecnkr.am
facebook.com/cecnkr.am